DOI: 10.61760/18290108-ehn24.2-84

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

Ա. Մ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի ղեկավար

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ ներդրումները տնտեսության զարգացման շարժիչ ուժն են: Ներդրումը տարբեր ճյուղերի ձեռնարկություններում, ձեռնարկատիրական նախագծերում, սոցիալ-տնտեսական ծրագրերում, նորամուծական նախագծերում պետական կամ մասնավոր կապիտալի, արժեթղթերի, դրամական գնահատում ունեցող մտավոր արժեքների, գույքի, գույքային իրավունքի, այլ իրավունքների տեղաբաշխում է, որը կատարվում է տեղաբաշխումից զգալի ժամանակ անց շահույթ ստանալու և (կամ) այլ օգտակար էֆեկտի հասնելու նպատակով[1]:

Ներդրումների կարևորությունը միշտ եղել է տնտեսագիտության տեսության արդիական թեմա: Այդ մասին են վկայում մի շարք հեղինակավոր տնտեսագետների ուսումնասիրությունները[2]: *Ներկայումս ներդրումների ներգրավումը դարձել է համաշխարհային տնտեսության զարգացման անհրաժեշտ պայման, ինչպես նաև միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններից մեկը: Աշխարհի գրեթե ոչ մի պետություն չի կարող իր տնտեսությունը արդյունավետորեն զարգացնել առանց ներդրումների ներգրավման, հետևաբար ներկայումս ազգային տնտեսությունների հաջող զարգացման պայմաններից մեկը օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ ռացիոնալ քաղաքականության վարումն է:*

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 10.10.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 22.01.2024:

[1] Սույն սահմանումը մենք կազմել ենք հենվելով մի շարք սահմանումների վրա, որոնք բերված են «Лекция 1. “Инвестиции. Инвестиционная политика. Инвестиционная политика в Российской Федерации в условиях экономического кризиса”». «Высшая школа экономики» (https://www.hse.ru/data/758/364/1225/Лекция1_ Теория.pdf):

[2] Տես, օրինակ, *Дж. Кейнс.* Общая теория занятости, процента и денег. М., 2002, с. 8; *А. Смит.* Исследование о природе и причинах богатства народов, кн. 1. М., 1935, с. 285; *Дж. Гитман, М. Н. Джонк.* Основы инвестирования. М., 1999, с. 18:

Այսպիսով՝ ներդրումները կարևոր դեր են խաղում ցանկացած երկրի տնտեսության զարգացման, սոցիալական պրոբլեմների լուծման, պետության պաշտպանության ամրապնդման և ազգային անվտանգության ապահովման գործում: Ներդրումային ծրագրերը հնարավորություն են տալիս մեծացնելու արտադրության ծավալները, կատարելագործելու կիրառվող տեխնիկան ու տեխնոլոգիան, ինչը, իր հերթին, հնարավորություն է տալիս արտադրելու նոր, գոյություն ունեցող զինատեսակների կատարելագործված տարբերակներ, այսինքն՝ խթանելու ռազմական արդյունաբերության զարգացումը, քանի որ այն ընդհանրապես տնտեսության զարգացման լոկոմոտիվն է[3]: Ներդրումների շնորհիվ պետությունը կարողանում է թողարկել միջազգային ստանդարտներին համապատասխանող որակյալ արտադրանք, ստեղծել նոր աշխատատեղեր, նվազեցնել գործազրկությունը և, վերջին հաշվով, բարձրացնել բնակչության կյանքի որակը, այսինքն՝ ներդրումը տնտեսական կյանքի անհրաժեշտ խթանիչ բաղադրատարրն է:

Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում առավել կարևոր ու հրատապ խնդիրներից մեկը երկրում ներդրումների աշխուժացումն է: Այս խնդրի լուծումը էական նախապայման է հետագա տնտեսական աճի ապահովման համար, հետևաբար ՀՀ-ն ներդրումային քաղաքականությունը պետք է դիտի որպես տնտեսության աճմանն ուղղված քաղաքականության առանցքային ուղղություն, քանի որ բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովումը պայմանավորում է գործարարության աշխուժացում, եկամուտների աճում և, համապատասխանաբար, գործազրկության և աղքատության մակարդակների նվազում:

Ռուստի և մենք սույն հոդվածում Թաիլանդի Թագավորության օրինակով ներկայացնում ենք ներդրումային քաղաքականության մշակման փորձը, որը կատարվել է գոտիների ստեղծման եղանակով, որն էլ իր հերթին էապես նպաստել է ներդրողների վստահության ու պետության ներդրումային գրավչության մեծացմանը: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ-ում այդ փորձը տեղայնացնելու համար անհրաժեշտ է պարզել ներդրողների ակտիվ ներգրավմանը խոչընդոտող յուրաքանչյուր գործոնի ազդեցության մակարդակը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ու մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, որոշ օտարերկրյա փորձագետներ դրանց շարքը դասում են ֆինանսների անհասանելիությունը (անմատչելիությունը), հարկային դրույքաչափերը, հարկային օրենսդրության անկատարությունը, կոռուպցիան[4]: Ռուստի և մենք հոդվածում ներկայացնում ենք

[3] Տես *Գ. Է. Հարությունյան,* ՀՀ տնտեսությունում ռազմաարդյունաբերության զարգացման էքստեռնալները և դրանց ինտեռնալացման հեռանկարները: «ՀԲ», 2017, հմ. 3, նաև՝ *նույնի*՝ ՀՀ ռազմական ծախսերի օպտիմալացման խնդիրը տեխնոլոգիապես նոր սպառազինությունների արտադրությունից դրական էքստեռնալների համատեքստում: «ՀԲ», 2023, հմ. 1:

[4] Տես «2023 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ)»: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (https://transparency.am/hy/cpi):

նաև դրանց վերացմանը և ներդրողների վստահության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված առաջարկություններ:

Թաիլանդի՝ ներդրումային գոտիների ստեղծման փորձը և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները

Ներդրումը կապիտալի այնպիսի տեղաբաշխում է, որի դեպքում ներդրողը շահույթ է ստանում ամբողջ կապիտալի ծավալի աճման շնորհիվ, հետևաբար այն բնորոշվում է որպես տնտեսության զարգացման շարժիչ ուժ: Հասկանալի է, որ ներդրումների հոսքը խթանելու համար պետությունները պետք է մշակեն և կիրառեն ներդրումներ ներգրավելու ամենաարդյունավետ ռազմավարությունները:

Ընդհանուր առմամբ ներդրումների գործընթացի և հատկապես դրանց կառավարման համար առանձնահատուկ կարևորություն ունեն երկու պարամետրներ՝ ռիսկը և ժամանակը.

- ժամանակը ներդրումների կատարման և դրանց հատուցման միջև եղած ժամանակամիջոցն է,
- ռիսկը սպասվելիք եկամուտների հոսքից զրկվելու վտանգի հավանականությունն է, որի արժեքը պայմանավորում է ռիսկայնության աստիճանը: Այլ կերպ ասած՝ ներդրումային ռիսկը տնտեսական ռիսկի կարևոր բաղադրիչն է և էապես ազդում է հասարակության գործարարական ակտիվության վրա:

Հետևաբար ներդրումների համար պահանջվում է ներդրումային ոլորտում անհրաժեշտ ռեսուրսների առկայություն, իսկ զարգացող երկրները (բացառությամբ նավթային երկրների) սովորաբար տուժում են ներքին խնայողությունների կուտակման ցածր տեմպերի պատճառով՝ անհատական եկամուտների աճման ցածր տեմպերի և ֆինանսական աղբյուրների սահմանափակության հետևանքով: Ուստի արտաքին ֆինանսավորման աղբյուրները, ինչպիսիք են աշխատողների տրանսֆերտները, օտարերկրյա օգնությունները և օտարերկրյա ուղղակի ներդրումները, կարևոր են այդ պետությունների ֆինանսական աղբյուրների պակասը լրացնելու համար: Դրա հետ մեկտեղ արտաքին ֆինանսավորումը, իր հերթին, նպաստում է ՀՆԱ-ի աճմանը, արտադրողականության և մրցունակության մեծացմանը, գործազրկության նվազմանը, արտահանման ծավալների աճմանը, առևտրային հաշվեկշռի բարելավմանը[5]:

Ինչպես երևում է գծ. 1-ից, ՀՀ-ում ներդրումները ունեցել են ինչպես աճելու, այնպես էլ նվազելու միտումներ: Այսպես. 2022 թվականին ներդրումները 2010 թվականի համեմատությամբ ավելացել են (998,2 մլն դոլարով), իսկ 2020 թվականին դրանք 2019 թվականի համեմատությամբ կրճատվել են (1087,4 մլն դոլարով), ինչի պատճառներն էին կորոնավիրուսային համավա-

[5] Տես *S. Abdelhadi, A. Bashayreh, M. W. Alomari.* The effect of fragility on foreign direct investment deterioration: the case of MENA countries. “Journal of Sustainable Finance & Investment”, 2022, Vol. 12, Issue 4:

րակը և 44-օրյա Արցախյան պատերազմը: Ինչ վերաբերում է 2022 թվականին կատարված ներդրումներին, ապա նախորդ տարվա համեմատությամբ դրանք 1385,9 մլն դոլարով ավելացել են, թեև դա չի հանգեցրել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ուստի ներկայիս փուլում Հայաստանի տնտեսական քաղաքականության համար առավել հրատապ են



Գծապատկեր 1. 2010–2022 թթ. ՀՀ-ում ներդրումների դինամիկան (մլն դոլար)

Աղբյուրը՝ «Օտարերկրյա ներդրումները 2011 թվականի հունվար-դեկտեմբերին» (https://www.armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf), նույնի՝ 2012 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf); 2013 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_14a_420.pdf), 2014 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_15a_420.pdf), 2015 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_16a_420.pdf), 2016 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf), 2017 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_18a_420.pdf), 2018 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_19a_ 420.pdf), 2019 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_20a_420.pdf), 2020 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_21a_420.pdf), 2022 թ. (https://www.armstat.am/file/article/sv_02_23a_420.pdf):

տնտեսական աճը խթանելու, պետության կայուն սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու հետ կապված խնդիրները: Դա նշանակում է, որ կարևոր է ուսումնասիրել այլ պետությունների կիրառած այնպիսի ներդրումային քաղաքականությունները, որոնք նոր դռներ են բացել ներդրումների ներգրավման համար:

Նման պետություններից է Թաիլանդը, որի Ներդրումային խորհուրդը ներդրումների հոսքը խթանելու նպատակով ստեղծեց երեք ներդրումային գոտիներ, դրանցում ներառելով՝

– մայրաքաղաք Բանգկոկը,
– մայրաքաղաքին ամենամոտ 10 նահանգները,
– մնացած նահանգները:

Ի դեպ, ներդրողներին տրամադրվող արտոնությունները առաջինից դեպի երրորդ գոտի մեծացվում են հեռավոր մարզերը համաչափ կերպով զարգացնելու նպատակով: 2018 թ. Թաիլանդի Նախարարների խորհուրդը որոշեց երկրի 5 նահանգներում (Տակ, Սակեու, Տրատ, Մուկդահան և Սոնգկիլա) ստեղծել ազատ տնտեսական գոտիներ, որպեսզի մեծացնի հարևան երկրների՝ Կամբոջայի, Լաոսի, Մյանմայի, Մալայզիայի հետ անդրսահմանային առևտուրը[6]: Ըստ այդմ՝ Թաիլանդի Կառավարությունը տվյալ նահանգներում կիրառեց արտադրության ***նպատակային զարգացման ռազմավարություն*** (տես Աղ. 1): Որպես դրա օրինակ նշենք գյուղատնտեսական ապրանքներ մշակող արդյունաբերության զարգացումը, անասնաբուծության և ջրային տնտեսության պայմանների նախատեսվող բարելավումը, բույսերի,

Աղյուսակ 1

Թաիլանդում արտադրության նպատակային զարգացման ռազմավարական ոլորտները*

Արտադրություն	Նահանգներ				
	Տակ	Սակեու	Տրատ	Մուկդահան	Սոնգկիլա
Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում	•	•	•	•	•
Կերամիկայի արտադրություն	•				
Մանածագործական և կաշվե իրերի արտադրություն	•	•			•
Կահույքի արտադրություն	•	•			•
Զարդերի արտադրություն	•	•			
Բժշկական սարքավորանքի արտադրություն	•	•			
Ավտոմեքենաների և դրանց մասերի արտադրություն	•	•			
Էլեկտրատեխնիկայի արտադրություն	•	•		•	
Պոլիէթիլենի արտադրություն	•	•			
Դեղերի արտադրություն	•	•			
Ապահովումային (լոգիստիկական) ծառայություններ	•	•	•	•	•
Արդյունաբերական օբյեկտների շինարարություն	•	•	•	•	•
Զբոսաշրջություն և հարակից ոլորտներ	•	•	•	•	•

[6] Տես “Royal Thai Government” (https://www.thaigov.go.th/gallery/contents/all/3):

* Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով Թաիլանդի Կառավարության 2015 թ. ռազմավարության դրույթները:

առաջին հերթին՝ բանջարեղենի, մրգերի և ծաղիկների տեսակավորման, փաթեթավորման և պահպանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, բուսական և կենդանական ծագում ունեցող ճարպերի, յուղերի ու ձեթերի արտադրությունը (բացառությամբ սոյայի յուղի), բնական ռետինի արտադրությունը և առաջնային վերամշակումը, առաջատար տեխնոլոգիաների օգտագործմամբ սննդամթերքի և դրա բաղադրիչների պահպանման նոր մեթոդների մշակումը, գյուղմթերքի վաճառքի մասնագիտացված առևտրական կենտրոնների ստեղծումը:

Ավտոմոբիլային արդյունաբերության զարգացումը ներառում է համապիտանի շարժիչների և այլ սարքավորանքի ստեղծում ու թողարկում, մոտոցիկլետների արտադրություն: Էլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկայի ոլորտի զարգացումը նպատակաուղղված է լույսի աղբյուր ծառայող դիոդային լամպերի, էլեկտրական շարժիչների, ձայնային և տեսասարքերի արտադրությանը: Զբոսաշրջության բնագավառում կառավարությունն առավելապես խրախուսում է լաստանավային ծառայությունների կազմակերպումը, մշակութային օջախներով և ավանդական ժողովրդական արվեստի կենտրոններով զբոսայգիների, մշտապես գործող ցուցահանդեսների, առողջության վերականգնման կենտրոնների ստեղծումը:

Թաիլանդի Ներդրումային խորհուրդը հիշյալ 5 նահանգներում սահմանեց արտոնյալ հարկային ռեժիմ[7], համաձայն որի՝ ներդրողներին տրվում են հետևյալ արտոնությունները՝

- ազատում շահութահարկից մինչև 8 տարի ժամկետով,
- ազատում ներմուծված մեքենաների և սարքավորանքի համար մաքսատուրքի վճարումից,
- ազատում արտահանման նախանշանակված արտադրանքի թողարկման համար ներմուծվող հումքի մաքսատուրքից,
- շահութահարկի դրույքաչափի նվազեցում ¼-ով՝ նոր ընկերությունների հիմնման և նորամուծական սարքավորանքի ձեռքբերման նպատակով,
- շահութահարկի լրացուցիչ իջեցում 50 %-ով 5 տարի ժամկետով:

Տրամադրվում են նաև այլ արտոնություններ, ինչպիսիք են՝

- արտերկրից արտարժույթով միջոցներ փոխանցելու թույլտվություն,
- Թաիլանդում հմուտ աշխատուժ և փորձագետներ ներգրավելու նպատակով ներդրումային ծրագրերին մասնակցության թույլատրում,
- մասնավոր հատվածին բանկերի արտոնյալ վարկերի տրամադրում:

Ընդհանուր առմամբ, ներդրումային խորհուրդը քննարկում է ներդրումային նախագծեր իրագործելու վերաբերյալ դիմումները, ինչպես նաև որոշում է ներկայացված ծրագրին իր տված գնահատականի հիման վրա

[7] Տես “Thailand Board of Investment” (https://www.thailandlawyer.net/thailand-board-of-investment/):

տվյալ դիմորդին տրամադրվող արտոնությունների ցանկը և սահմանում է ներդրողների գրանցման կարգը:

Ներդրողը նախագծի հաստատման մասին ծանուցում ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում պետք է կրկին անգամ Խորհուրդ ներկայացնի «Առաջարկվող կարգավիճակ» նախագիծը հանձնելու պահանջ: Ստանալով անհրաժեշտ փաստաթղթերը՝ Խորհուրդը 10 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողին հանձնում է վկայագիր (խթանման վկայագիր), որով հավաստիացնում է, որ ներդրողի առաջարկած նախագիծը հաստատվել է:

Այսպիսով՝ Թաիլանդի 5 նահանգներում իրագործված «նպատակային» ռազմավարության շնորհիվ հնարավոր եղավ ապահովել ոչ միայն այդ նահանգների համաչափ զարգացումը, այլև ներգրավել նոր ներդրումային նախագծեր: Դա մեզ հիմք է տալիս առաջարկելու Հայաստանի Հանրապետությունում ևս կիրառելու այն՝ ՀՀ պայմաններին հարմարեցմամբ: Տվյալ ռազմավարության ներդրման նպատակով առաջարկվում է հարկային արտոնություններ տալ հատկապես այն ոլորտներում գործող ներդրողներին, որոնք ունեն երկրի համար ռազմավարական նշանակություն, զբաղվածության մակարդակի բարձրացման, եկամուտների ավելացման ներուժ, ուստի անհրաժեշտ է իրականացնել հասցեական միջոցառումներ: Միևնույն ժամանակ, այդ միջոցառումների արդյունավետությունը ապահովելու, ինչպես նաև Թաիլանդի ներդրումային գոտիների փորձը հնարավորինս տեղայնացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու գնահատել *ՀՀ-ում ներդրողների վարքի վրա ազդող գործոնները:*

ՀՀ-ում ներդրողների վարքի վրա ազդող գործոնները և դրանց արդյունավետության մեծացման ուղիները

Ներդրումային միջավայրում առկա են մի շարք գործոններ, որոնք հանգեցնում են օտար ներդրողների վարքի փոփոխությունների, ուստի ներդրումային քաղաքականության արդյունավետությունը մեծացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ փոփոխականությունը և պարզել ներդրումային միջավայրի զարգացմանը և մրցունակության մակարդակի բարձրացմանը խոչընդոտող գործոնների ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև մշակել այդ ներդրումների ներգրավումն ակտիվացնելու գործուն եղանակներ[8]:

Տնտեսության զարգացման վրա ներդրումների ունեցած ազդեցությունը պարզելու համար իրականացվել են էմպիրիկ վերլուծություններ: Արդյունքները ցույց են տվել, որ ներդրումների և ՀՆԱ-ի միջև կա դրական փոխկապվածություն[9], ուստի ներդրողների վարքի վրա ազդող գործոնների գնահա-

[8] Տես *Թ. Ն. Մանասերյան,* ՀՀ տնտեսական զարգացման առանձնահատկությունները և հեռանկարները: «ՀԲ», 2016, հմ. 3:

[9] Տես *J. Asafu-Adjaye.* The effect of foreign direct investment on Indonesian economic growth. “Economic Analysis and Policy”, 2000, Vol. 30, N 1; *A. Ghatak, F. Halacioglu.*

տումը կարևոր է հետագա տնտեսական աճի դինամիկայի բարձրացման համար:

Սույն հոդվածում ներդրողների վարքի վրա ազդող գործոնները դիտարկելու համար հիմք են ծառայել այն տվյալները, որոնք հրապարակվել են «Տնտեսական համաշխարհային ֆորում» (World Economic Forum) կազմակերպության լույս ընծայած «Մրցակցության համընդհանուր ինդեքս» տեղեկագրության *(Global Competitiveness Index)* 2020–2021 թթ. թողարկման մեջ[10]:

Ուսումնասիրությունը կատարվել է ուղղակի մեթոդով, որով նախատեսվում է տվյալների ստացում հարցման միջոցով: Հարկ է հիշատակել, որ նախապես նշված են եղել հետևյալ գործոնները՝

- կոռուպցիա,
- ֆինանսավորման մատչելիության աստիճան,
- հարկային դրույքաչափեր,
- մաքսային և առևտրային կանոնակարգեր,
- հարկային վարչարարություն,
- պատշաճ կրթություն չունեցող աշխատուժ,
- արտարժույթի հետ կապված կարգավորումներ,
- ենթակառուցվածքների ոչ պատշաճ ապահովում,
- գնաճ,
- խիստ աշխատանքային կանոնակարգեր,
- նորամուծություններ կատարելու անբավարար կարողություն,
- տեղի աշխատուժի նվազ աշխատանքային էթիկա,
- հանցավորություն և հափշտակություններ:

Գծապատկեր 2-ում ներկայացված են այն գործոնների կշռային արժեքները, որոնք խոչընդոտում են ներդրումների ներգրավմանը:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, ներդրումների ներգրավման համար որպես հիմնական խոչընդոտներ դեռ շարունակում են մնալ ֆինանսների անհասանելիությունը, հարկային դրույքաչափերը, հարկային օրենսդրությունը և կոռուպցիան: Հետևաբար ՀՀ ներդումային քաղաքականությունը պետք է ապահովի հետևյալ նախադրյալները.

1. **բաց, ապահով և կանխատեսելի ներդրումային ռեժիմ, մասնավորապես՝**
   - երկիր մուտք գործելու պարզ, սահուն և կանխատեսելի ընթացակարգեր,
   - միջազգային ներդրումային այնպիսի համաձայնագրերի ընդգրկուն ցանց, որոնցով ներդրողներին առևտրի և ներդրումային հոսքերի

Foreign direct investment and economic growth: some evidence from across the world. “Global Business and Economics Review”, 2007, Vol. 9, N 4; *Дж. Кейнс.* Сбережения и инвестиции, 2 мая 2010 (http://ecouniver.com/925-sberezheniya-i-investicii-dzh-kejns.html):

[10] Տես *G. W. Brown, M. T. Cliff.* Investor Sentiment and The Near-Term Stock Market. “Journal of Empirical Finance”, January 2004, Vol. 11, Issue 1:

համար տրամադրվեն հստակ կանոններ և գործունեության ոլորտներ՝ դրանով իսկ այն շուկաների առավելագույն կանխատեսելիության ապահովմամբ, որտեղ նրանք ցանկանում են մուտք գործել,

- կանոնակարգման միջավայրի կանխատեսելիություն և թափանցիկություն պետության և ներդրողների փոխհարաբերությունների համար, ինչպես որ դա սահմանված է Միջազգային ներդրումային համաձայնագրերով,

2. **արտահանման-ներմուծման արդյունավետ հոսքեր և գործառություններ**, մասնավորապես՝ հիմնական գործընկերների հետ առևտրի և ներդրումների բաց ռեժիմներ, առևտրի արդյունավետ ապահովում (լոգիստիկա) և առևտրի խթանման ընթացակարգեր:

Գծապատկեր 2. ՀՀ-ում ներդրումներ կատարելու համար հիմնական խոչընդոտները (%)

Աղբյուրը՝ “World Economic Forum” կայքը (https://www.weforum.org/reports/):

Ներդրումային միջավայրը հետազոտելիս կարևոր է ուսումնասիրել նաև գործարարության միջավայրը, քանի որ դրանք սերտորեն փոխկապված են և մեկը մյուսի ցուցանիշների բարելավման գրավականն է: Այսօր մի շարք միջազգային կազմակերպություններ տարբեր ցուցանիշների հիման վրա գնահատում են տարբեր պետություններում գործարարական միջավայրի վիճակը: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակում են «Բիզնես գործունեությունների վարման» *("Doing Business")* տարեկան տեղեկագրությունները: Դրանցում ամփոփ կերպով ներկայացվում են աշխարհի 190 պետություններում գործարարությամբ զբաղվելու պայմանները բնութագրող հիմնական ցուցանիշները: Ներկայացված 10 պարամետրներն ամփոփ կերպով արտահայտում են տվյալ երկրի գործարարական միջավայրի վարկանիշային գնահատականը, ինչը նաև ապագայի համար ստեղծում է օտարերկրյա ներդրողների ներգրավման հնարավորություններ և նոր ներդրումային ծրագրերի իրագործման ու կայուն տնտեսական աճի ապահովման համար նախադրյալներ[11]:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության 2009–2021 թթ. ցուցանիշներն ըստ «Բիզնես գործունեությունների վարման» տեղեկագրության*

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Բիզնես սկսելու մեկնարկային պայմաններ	84.8	85.0	90.4	94.3	94.8	94.9	97.5	97.8	72.2	73.6	73.2	96,1	96.1
Սեփականության գրանցում	92.9	93.2	93.3	92.8	92.9	93.0	93.0	93.0	87.3	87.4	87.2	88.6	88.6
Հարկերի վճարումներ	40.5	40.6	40.6	40.6	53.6	71.4	74.5	82.1	72.5	72.5	60.2	74.0	81.5
Շինարարության թույլտվության տրամադրում	59.7	63.9	65.3	64.7	74.0	73.7	73.6	73.8	69.9	70.0	70.1	68,0	73.1
Վարկերի հասանելիություն	68.7	68.7	68.8	68.8	75.0	75.0	65.0	65.0	65.0	75.0	74.0	70.0	70.0

[11] Տես *S. Djankov, C. Freund, C. S. Pham.* Trading on Time. "Review of Economics and Statistics", 2010, Vol. 92, Issue 1:

* Հիմք է ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» տեղեկագրի տվյալները 2009–2021 թթ. (տես "Doing Business Archive". "The World Bank" (https://archive.doingbusiness.org/en/doingbusiness)):

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Միջազգային առևտուր վարելու դյուրինություն	61.4	56.8	56.0	64.0	63.9	64.7	64.5	68.8	86.5	86.5	86.3	90.8	91.7
Էլեկտրաէներգիայի մատակարարման բաժանորդագրում	–	–	49.5	49.3	49.4	56.0	64.0	64.0	70.0	73.2	74.0	90.8	87.7
Ներդրողների պաշտպանվա-ծություն	50.0	50.0	50.0	50.0	50.0	63.3	60.0	60.0	60.0	60.0	60.0	42.0	40.0
Պայմանագրերի կիրառում	58.2	59.2	59.2	59.2	51.5	51.4	53.3	53.3	67.9	69.7	69.0	69.7	69.7
Անվճարունակութ-յան հարցերի կարգավորում	–	–	–	–	–	–	–	–	46.4	46.1	45.2	44.0	44.6

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ցուցանիշներից 4-ը բարելավվել են, 2-ը՝ վատթարացել, իսկ 4-ը՝ մնացել անփոփոխ: Հայաստանը միանգամից 5 կետով բարելավել է իր դիրքն ըստ «Շինարարության թույլտվության տրամադրում» ցուցանիշի՝ զբաղեցնելով աշխարհում 62-րդ տեղը: «Հարկերի վճարումներ» ցուցանիշով առաջընթացը կազմել է 7 կետ, ինչը ՀՀ-ին ապահովելու է 52-րդ տեղը, Հայաստանի Հանրապետությունը միայն 2 կետով է նահանջել «Էլեկտրաէներգիայի մատակարարման բաժանորդագրում» ցուցանիշով՝ զբաղեցնելով 30-րդ տեղը, մինչդեռ «Ներդրողների պաշտպանվածության» ցուցանիշով նահանջը կազմել է 2 կետ (42-րդ տեղը), ինչը կարող է լուրջ խնդիր դառնալ երկրի հետագա զարգացման համար, քանի որ ներդրողները բնականաբար կզգուշանան այս առումով հետընթաց ապրող երկրում ներդրումներ կատարելուց[12]:

Ուրեմն ներդրումների պաշտպանությունը այն կարևոր հարցերից է, որը պետք է քննության առնվի պետության ներդրումային քաղաքականությունն ու օրենսդրությունը վերանայելիս: Եթե ներդրողները վստահ չլինեն, որ իրենց ակտիվները՝ ներդրումը, շինությունները, աշխատողները և հենց իրենք պատշաճ կերպով պաշտպանված են, ապա պարզապես չեն կատարի այդ ներդրումները, իսկ արդեն գործող ներդրողները կարող են լքել ընդունող երկիրը՝ համարելով, որ կարող են անպատիժ կերպով զրկվել իրենց ունեցվածքից: Հետևաբար կարևոր է, որ «Ներդրումների մասին» օրենքով սահմանված լինեն ներդրողների պաշտպանության հաստատուն երաշխիքները, սակայն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ Օրենքով չեն նախատեսվում հիմնական երաշխիքներից մի քանիսը, ինչը էապես

[12] Տես *A. M. Kyureghyan.* Factor analysis contributing to the development of business environment abroad and its application capabilities in the Republic of Armenia. “Economics”. Warszawa, Polska, 2019, N 6(30):

խոչընդոտում է մեր պետության ներդրումային գրավչության մակարդակի բարձրացմանը:

Օտարերկյա փորձագետների կարծիքով՝ ներդրողները ՀՀ-ում բախվում են նաև օտարման, պայմանագրի խախտման, թափանցիկության պակասի, պետական մարմինների անկանխատեսելի և կամայական գործողությունների, արտարժույթի փոխարկման և փոխանցման խնդիրների հետ[13], ուստի անհրաժեշտ է մշակել դրանց լուծման արդյունավետ մեխանիզմ (տես Գծ. 3):



Գծապատկեր 3. ՀՀ-ում ներդրումների արդյունավետության մեծացման մեխանիզմները*

Ըստ մեր մշակած մեխանիզմի՝ առաջարկվում է արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի ստանդարտների ներդրում. օտարումից պաշտպանության ամրապնդում՝ լավագույն փորձի բաղադրիչների ներդրմամբ, անդրադառնալով թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի օտարումներին և առավել ման-

[13] Տես «2023 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ)»: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (https://transparency.am/hy/cpi):

* Գծապատկերը կազմել է հեղինակը:

րամասն ներկայացնելով փոխհատուցման պայմանները, արտարժույթի փոխարկելիության և փոխանցման երաշխիքների ամրապնդում՝ ավելացնելով երաշխիքից օգտվող գործառնությունների տեսակները և ներդրելով դրանք ժամանակին կատարելու բաղադրիչը՝ միաժամանակ նշելով հնարավոր բոլոր բացառությունները: Այս մեխանիզմի գործարկումը հնարավորություն կտա իրագործելու նոր ներդրումային ծրագրեր և կհանգեցնի ներդրողների վստահության աստիճանի բարձրացմանը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանի ներդրումային միջավայրի համար օբյեկտիվորեն գոյություն ունեն լուրջ սահմանափակումներ, ինչպիսիք են յուրաքանչյուր պահի պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը, ներտարածաշրջանային ռազմաքաղաքական անկայունությունը, ներքին շուկայի փոքր ծավալները:

Երկրի տնտեսական զարգացման կարևոր գործոններ պետք է համարել տնտեսության մասնագիտացման նպատակով համաշխարհային շուկայի ճիշտ ոլորտների որոշումը, դրան համապատասխան ներդրումների խրախուսման ռազմավարության ընտրությունը և իրագործումը: Ըստ այդմ, մեր կարծիքով, ուսանելի պետք է համարել հոդվածում ներկայացված Թաիլանդի 5 նահանգներում ձեռնարկված արտադրական նպատակայնացման, ինչպես նաև այնտեղ նոր ներդրումային նախագծերի ծավալման համար արտոնյալ հարկային ռեժիմի սահմանման փորձը: Շնորհիվ այդ ներդրումային քաղաքականության՝ Թաիլանդը հնարավորություն ստացավ ապահովելու նահանգների համաչափ զարգացումը, ամբողջ երկրի տնտեսական առաջընթացը: Ըստ այդմ՝ առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում ևս կիրառել «նպատակամետ» ռազմավարությունն ամբողջությամբ, ինչը միանշանակ կերպով կհանգեցնի տնտեսության աշխուժացման և տնտեսական կյանքի դրական փոփոխությունների:

Հոդվածում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ օտարերկրյա ներդրողների համար զգալի չափով խոչընդոտող գործոններ են հարկային դրույքաչափերը, հարկային օրենսդրությունը և կոռուպցիան: Հետևաբար ներդրումների և ներդրողների պաշտպանության կարևորության գիտակցմամբ անհրաժեշտ է ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում նախատեսել հարկային արտոնություններ, ինչպես նաև մշակել ու ներդրել այնպիսի իրավական համակարգ, որը երկիրը կդարձնի օտարերկրյա ներդրումների համար գրավիչ:

Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը պայմանավորված է առաջին հերթին տնտեսական անվտանգության դեմ ուղղված արտաքին և ներքին մարտահրավերներին պատշաճ կերպով դիմակայելու և ազգային տնտեսությունը մրցունակ դարձնելու անհրաժեշտությամբ:

Այսօր ՀՀ-ի համար ներդրումային որոշումների վրա ազդող կարևոր գործոններն են քաղաքական կայունությունն ու անվտանգությունը, որոնք ավելի մեծ կշիռ ունեն, քան ցածր հարկային դրույքաչափերը և աշխատուժի ծախսերը, քանի որ քաղաքական իրադարձությունները տարաբնույթ ու փոփոխական են և անկանխատեսելի, իսկ ներդրողը սիրում է կայունություն և առնվազն մեկ տարվա կանխատեսելիություն:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПРОБЛЕМЫ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ РА В АСПЕКТЕ ПОВЕДЕНИЯ ИНВЕСТОРОВ

А. М. КЮРЕГЯН, кандидат экономических наук, руководитель Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Инвестиции играют важную роль в экономическом развитии любого государства и решении социальных проблем, в укреплении его обороноспособности и создании экономической базы для обеспечения национальной безопасности. Осуществление инвестиционных программ позволяет увеличить производственные мощности и объемы производства, совершенствовать техническое и технологическое обеспечение, что в свою очередь позволяет повысить конкурентоспособность продукции, выставляемой на международных рынках, и объемы экспорта, в том числе ВВТ. На современном этапе развития экономики Республики Армения одной из наиболее актуальных задач является активизация инвестиций, в первую очередь – из зарубежья. Решение данной задачи является существенной предпосылкой для обеспечения дальнейшего неуклонного экономического роста. Существует несколько возможных моделей решения. В данной статье анализируется модель, использованная в Королевстве Таиланд, как наиболее приемлемая и эффективная, на взгляд автора, для приспособления к условиям РА. Разработанная в Таиланде инвестиционная политика позволила в значительной степени повысить доверие инвесторов и инвестиционную привлекательность государства. В то же время следует отметить, что для локализации данного опыта в РА необходимо выяснить уровень влияния каждого фактора, препятствующего активному вовлечению инвесторов. В связи с этим в статье обсуждаются не только эти самые факторы, но и предлагаются механизмы их преодоления.

ECONOMIC SECURITY

THE PROBLEMS OF THE RA INVESTMENT POLICY WITH A VIEW ON THE INVESTOR BEHAVIOUR

A. M. KYUREGHYAN, PhD in Economics, Head, Strategic Gaming and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Investments play a significant role in the economic development of any state and salvation of social issues, in the improvement of the national defense capability, as well as shaping economic base for ensuring its national security. The implementation of investment programs enables the increase of manufacturing capacities and volumes of production, the improvement of technical and technological support, this in its turn making it possible to add to the competitiveness of products displayed at international markets, and to increase the volumes of export, including armaments and military equipment. At the contemporary stage of the RA's economy development, one of the most urgent tasks is the activation of investments and primarily from abroad. The salvation of this task is a key premise for ensuring further steady economic growth. There are several possible models of salvation. This article analyzes the model adopted in the Kingdom of Thailand as an ultimately acceptable and efficient, according to the author, model for adapting to the RA conditions. The investment policy developed in Thailand provides for significant increase of investor confidence and investment attractiveness of the state. At the same time, it is worthwhile noting that the level of influence of each factor, hindering the active involvement of investors, should be found out for localizing this experience in the RA. With this view, the article argues not only these very factors, but also draws forward mechanisms to counter them.